

նր կէս-անկախ վիճակով դրացի մեծ ու փոքր պետութիւններու Ֆէտէրացիային միացնել, հակառակ պարագային, նոր դասաւորուած ուժերը հաշուի առնելով դիմել դէպի բացարձակ անկախութիւնը:

Թուրքիոյ վերաբերմամբ, նոյնպէս, յաւիտեական չի կրնար ըլլալ հայ ժողովրդի անհաշտ կեցուածքը: Աւելի շիտակ, թուրք ժողովուրդն է անհաշտ, որու հարկադրանքով, դառն փորձառութիւններէ յետոյ, հայ ազգը կը մնայ պայքարի միւս ճակատին վրայ: Եթէ Վիլսոնի դժած սահմաններով միացեալ Հայաստանը ստեղծուի, եւ թուրքիան ամփոփուի իր ազգային սահմաններու մէջ, բնական է, որ այս երկու ազգերու համար կը բացուին զարգացման նոր ճանապարհներ: Եւ բնաւ դարմանալի թող չլթուի, եթէ ըսեմ, որ 25-50 տարի յետոյ, ուժովցած Հայաստանը թերեւս պիտի դաշնակցի թուրքիոյ հետ իր ազգային եւ քաղաքական շահերը ապահովելու համար Փոքր Ասիոյ շրջաններու մէջ: Բայց այս բոլորը հեռաւոր հաւանականութիւններ են: Այսօրուան իրականութիւնը մեզ չոր ու ցամաք, դէմ առ դէմ կը կայնեցնէ թուրք տարրին: Եւ որքան ատեն, որ մեր դատը չէ լուծուած թուրքին հետ, մենք պիտի որոնենք այնպիսի օրինատացիաներ, որոնք թուրքիոյ քայքայումին կը նըպաստեն:

Բոլշեւիկեան Ռուսաստանը թուրքիոյ բարեկամն է, եւ եթէ բարեկամ իսկ չըլլայ, հողային զբաւումներու չի ձգտիր, գոնէ Տաճկահայաստանի վերաբերմամբ: Հետեւաբար, կարելի է վստահ ըլլալ, որ հայ ժողովուրդը միշտ պտղ վերաբերմունք պիտի ունենայ դէպի ներկայ Ռուսաստանը: Դեռ աւելին. սպասողական ժամանակաշրջանի բոլորումէն յետոյ,

ան աւելի թշնամական դիրք պիտի բռնէ դէպի բոլշեւիկեան վարչաձեւը, անոր մէջ տեսնելով համաթրքական վտանգն իսկ:

Բոլշեւիկեան Ռուսաստանի օրինատացիայէն հրաժարելով, հայ ժողովուրդը սին յոյսերով չի օրօրուիր, այլ աւելի ու աւելի կը կեդրոնանայ ինքն իր մէջ: Կը ստիպուի ճիգ ու ջանք թափել իր ներքին ուժերը կազմակերպելու եւ տեսնելու իրեն սպառնացող վտանգը:

Այս ճանապարհը կ'ըլլայ միակ իրատես ուղին հայ ազգի համար, որ ներքնապէս ուժեղ ու կազմակերպուած՝ (իւր հնարաւորութիւններու սահմանին մէջ) արթուն ու աշարուրջ հսկող իր շրջապատին, միշտ կարող է այս կամ այն ուժի կողմը հակիլ, եթէ այդ վայրկեանին ձեռնառու եւ մեր շահերուն համապատասխան կացութիւն մը կը ստեղծուի:

Առանձին ու ինքնամփոփ, բայց կազմ ու պատրաստ պատահութիւններէն օգտուելու եւ շահ մը ապահովելու, երբ մեր առանձնութենէն դուրս պիտի ելնենք: Հայ բոլշեւիկներու քարոզած ոռուսական օրինատացիան, մեզ առանձնացուցած է մեր միջավայրէն եւ առանց օրգանական կապի, կապած է Ռուսաստանի հետ, փակելով բոլոր պատահութիւններու ճանապարհը:

Ահա, այս ոռուսական կապի (որ միշտ կրնայ կտրուիլ) անուևովն է, որ հայ բոլշեւիկները կը պարծենան, թէ հայ ժողովուրդը մեկուսացումէ ազատած են... իմ կարծիքով, անդունդէն կախած են. եւ եթէ թելը կտրուի, միամտած հայ ժողովուրդը անդունդ կ'իջնայ:

Լաւագոյն է հաշտուիլ գիտակից մեկուսացման մը հետ, գիտակցիլ մեր առանձնութիւնը եւ համապատասխան ուժ ու զգուշութիւն ամբարել, քան ոռուսական անդունդէն կախուած մնալ, սին յոյսերով:

